https://doi.org/10.46991/hc.2025.si1.133

# The Crisis of the Armenian Community of Syria and the Repatriation (2012-2018)

**Knarik Avagyan**
https://orcid.org/0009-0000-5496-4997
**NAS RA Leading Researcher at the Institute of History, PhD**
lira777@yahoo.com

**Keywords** - Syria, Armenian community, war, crisis, Ministry of Diaspora of the RA, preserving Armenianness, repatriation.

*As a consecuance of the war in Syria, started in March, 2011, and still continuing in different parts of the country, also Armenian-populated villages and towns, including Aleppo, Damascus, Kessab, were completely destroyed and set on fire. The Armenian churches, schools, national buildings, houses were looted, desecrated and set on fire. As a result of the emigration that started, as well as the victims, the Armenian community has become significantly thinner. About 10.000 of 80.000 Armenians remain.*

*Thousands of Armenian-Syrians have taken shelter among other countries (Lebanon, Jordan, the United Arab Emirates, the USA, Canada, Sweden, etc.) also in the Motherland, in the Republics of Armenia. From the beginning of the war to 2018, 22 thousand Syrian Armenians arrived in Armenia.*

*The RA government, particularly the Ministry of Diaspora (2008-2018), supported those who wanted to repatriate in every possible way and contributed to the socio-economic and educational integration of immigrants in the Motherland.*

*Under the conditions of a precarious and unpromising future and the gradually threatening dangers in Syria, as well as in the Near and Middle East and the Western countries, in addition to the dreadful geopolitical developments imperiling humanity and civilization, and a 100 years following the Armenian Genocide, it is advisable to ideologically and psychologically prepare those living in foreign lands and facing the danger of the maintenance of their physical existence and assimilation to make a transition from a century-old passive and inefficient Armenian-preserving policy into a practical land-preserving policy, into Repatriation to the Native Country.*

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 133-142.

Received: 15.11.2024
Revised: 10.02.2025
Accepted: 18.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

# Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը և հայրենադարձությունը (2012-2018 թթ.)

**Քնարիկ Ավագյան**
**ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.թ.**

**Հիմնաբառեր** - Սիրիա, հայ համայնք, պատերազմ, ճգնաժամ, ՀՀ սփյուռքի նախարարություն, հայապահպանություն, հայրենադարձություն:

*2011 թ. մարտին Սիրիայում սանձազերծված և երկրի տարբեր շրջաններում մինչև օրս շարունակվող պատերազմի հետևանքով ավերվել ու հրկիզվել են նաև հայաշատ գյուղերն ու քաղաքները, այդ թվում՝ Հալեպը, Դամասկոսը, հայաբնակ Քեսաբը: Թալանվել ու պղծվել են հայկական եկեղեցիները, դպրոցները, համայնքային կառույցներն ու բնակելի թաղամասերը: Սկսված արտագաղթի, ինչպես նաև տված զոհերի արդյունքում հայ համայնքը շեշտակի նոսրացել է. 80.000 հայից մնացել է շուրջ 10.000-ը:*

*Բազմահազար սիրիահայեր, ի շարս այլ երկրների (Լիբանան, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա և այլն), ապաստան են գտել նաև հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում: Պատերազմի սկզբից մինչև 2018 թ. Հայաստան է մուտք գործել 22.000 սիրիահայ:*

*ՀՀ կառավարությունը, մասնավորապես ՀՀ սփյուռքի նախարարության (2008-2018 թթ.) գործունեության ողջ ընթացքում, ամեն կերպ սատարել է հայրենադարձվել ցանկացողներին, նպաստել Հայրենիքում ներգաղթյալների սոցիալ-տնտեսական և կրթամշակութային համարկմանը:*

*Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմուտքի երկրների անապահով ու անհեռանկար ապագայի և օրեցօր սպառնացող վտանգների, մարդկության ու քաղաքակրթության նկատմամբ ահագնացող աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում՝ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, այժմ արդեն օտար ափերում նորից ու նորից ֆիզիկական գոյության պահպանման խնդրի առաջ կանգնած, ինչպես նաև ուծացման ու այլասերման դատապարտված հայությանն անհրաժեշտ է գաղափարապես ու բարոյահոգեբանական առումով նախապատրաստել անցում կատարելու մեկդարյա պասիվ ու անարդյունավետ հայապահպանությունից դեպի գործնական հողապահպանություն՝ «Դեպի Երկի՛ր» Հայրենադարձության և Հայրենաշինության:*

# Кризис армянской общины Сирии и репатриация (2012-2018 гг.)

**Кнарик Авакян**
**НАН РА Ведущий научный сотрудник Института истории, к.и.н.**

**Ключевые слова -** Сирия, армянская община, война, кризис, Министерство диаспоры РА, сохранение национальной идентичности, репатриация.

*В результате войны, начавшейся в Сирии в марте 2011 г. и продолжающейся до сих пор в разных частях страны полностью были разрушены и преданы огню также населенные армянами села и города, в том числе – Алеппо, Дамаск, армянонаселенный Кесаб. Армянские церкви, школы и национальные учреждения и жилые дома были разграблены и осквернены. В следствие начавшейся эмиграции, а также – жертв, армянская община значительно поредела: из 80 тыс. армян осталось около 10.000.*

*Тысячи сирийских армян нашли прибежище, помимо других стран (Ливан, Иордания, Объединенные Арабские Эми¬раты, США, Канада, Швеция и т. д.), и на своей родине – в Республике Армения. От начала войны до 2018 г. в Армению прибыли 22 тысячи сирийских армян.*

*В условиях бесперспективного будущего и изо дня в день нарастающей опасности в Сирии, на Ближнем и Среднем Востоке и в странах Запада, а также мощных геополитических процессов, касающихся человечества и цивилизации в целом, спустя 100 лет после Геноцида, у армян зарубежья (перед которыми вновь встал вопрос физического существования, равно как и угрозы отчуждения и извращения) появилась возможность идеологически и морально-психологически подготовиться к переходу от векового сохранения национальной идентичности на чужбине к практическому сохранению Родины – к массовой и всесторонней репатриации.*

* * *

***Մուտք:*** 2011 թ. մարտի 15-ից Սիրիայում սանձազերծված պատերազմական թեժ գործողությունների ողջ ընթացքում և հետագայում հայերը, որպես սիրիական հյուրընկալ երկրի հավատարիմ քաղաքացիներ, տեղի բնակչության, այլէթնիկ, մասնավորապես, քրիստոնյա խմբերի հետ միասին, կրել են թե՛ մարդկային ու նյութական զգալի կորուստներ և թե՛ ֆիզիկական ու բարոյական անասելի զրկանքներ։

Ալ-Ղաիդա, Ջաբհատ ալ-Նուսրա և ահաբեկչական այլ խմբավորումների զինյալները սպանել, առևանգել, կտտանքների են ենթարկել նաև Սիրիայի հայ ազգաբնակչությունը։

Ահաբեկիչները նպատակադրված թիրախավորել են, մասնավորապես, սիրիահայ համայնքի հոգևոր, կրթական ու մշակութային կենտրոնները: Ավերվել, թալանվել, պղծվել ու հրկիզվել են համայնքային գրեթե բոլոր կառույցները՝ եկեղեցիները, գերեզմանատները, դպրոցները, համայնքային և մշակութային օջախներն ու ակումբները, ազգապատկան շինությունները: Ավերածությունների ու ոչնչացման է ենթարկվել նաև Սիրիայի հայերի անձնական ունեցվածքը՝ բնակելի տները, արտերը, գործատեղիները և այլն:

Արդյունքում նոսրացել կամ ընդհանրապես հայաթափվել են երբեմնի հայաշատ քաղաքները, իսկ առանձին շրջաններում հայերն իրենց գոյությունը պահպանելու և պաշտպանելու նպատակով ստիպված ընդունել են մահմեդականություն:

ՀՀ կառավարությունը, միջազգային և սփյուռքյան հասարակական-բարեգործական կազմակերպությունների գործակցությամբ, հնարավոր բոլոր միջոցներով սատարել է Հայաստան ժամանած սիրիահայերին:

Թեման խիստ արդիական է՝ հաշվի առնելով ներկա աշխարհաքաղաքական իրավիճակն ու ռազմական բախումների օրըստօրե ընդարձակվող տարածքները: Մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի (Իրաք 2003 թ. մինչև օրս), Եգիպտոս (2011–2013 թթ.), Սիրիա (2011 թ., մարտի 15-ից մինչև օրս), Իսրայել (2023 թ., հոկտեմբերի 6-ից մինչև օրս), Լիբանան (2024 թ., սեպտեմբեր 23-ից մինչև օրս և այլն) հայ համայնքներում պարբերաբար ճգնաժամային իրավիճակների հետևանքով ստվարացել են տարերային հայրենադարձությունները հիշյալ երկրներից:

Սիրիահայ առանձին հետազոտողներ [Գաթրճեան, 2018; Չոլաքեան, 2021], որպես անմիջական ականատեսներ, իրենց գրվածքներում, առավելապես պատմողաբար ներկայացրել են պատերազմի հետևանքով հայ համայնքի ընդհանուր ճգնաժամը: Այդուհանդերձ, հենվելով ժամանակի պարբերական մամուլի, ինչպես նաև Սիրիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության զեկույցների վրա, փորձել ենք համակարգված և փաստագրված ներկայացնել համայնքի կրած մարդկային ու նյութական վնասները:

***Հայերի կրած մարդկային կորուստները:*** 2012 թ. հուլիսից առավել դաժան փորձությունների մեջ է հայտնվել Հալեպի հայ համայնքը՝ զրկվելով նաև ապրուստի միջոցներից [Համաժողովներ, 2017, 2]:

Ընդհանուր առմամբ, 2011-2017 թթ. Սիրիայի պատերազմի հետևանքով զոհվել է ավելի քան 225 հայ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, ծերեր: Հայ համայնքն ունեցել են հարյուրավոր վիրավորներ և հաշմանդամ դարձածներ [Համաժողովներ, 2017, 1]: 2017 թ. սեպտեմբերի դրությամբ, առևանգվել է 110 հալեպահայ, որոնցից 103-ը ազատ է արձակվել փրկագնի դիմաց, իսկ 7-ը՝ համարվել է անհետ կորած [Համաժողովներ, 2017, 2]:

Պատերազմի արդյունքում, Սիրիայի հայ համայնքը կրճատվել է 50%-ով, իսկ արդեն 2015 թ. մայիսի տվյալներով՝ 2/3-ով [The Survival of Syria's…, “Asbarez,” 24.09.2014; Two

Third of Armenian…, 2015]: 2017 թ. տվյալներով, Հալեպից հեռացել է հայ բնակչության 2/3-ը, Դամասկոսից՝ շուրջ կեսը [Համաժողովներ, 2017, 2, 3]:

Գրեթե ամբողջովին հայաթափվել են Դեյր-էզ-Զորի, Ռաքքայի շրջանները, Ղնեմիե, Յաղուբիե գյուղերը: 2014 թվ.-ից հայերը սկսել են լքել նաև Թել Արման, Դերիք և այլ բնակավայրերը: Թեժ մարտերի հետևանքով հայերի զգալի արտահոսք է եղել նաև Հասաքե նահանգից, փոքրաթիվ հայ ընտանիքներ հեռացել են Հոմս քաղաքից՝ հաստատվելով սիրիական ափամերձ շրջաններում (Թարթուսը, Բանիանը, Լաթաքիան, Քեսաբը և այլն) [Համաժողովներ, 2017, 3, 4; Չոլաքեան, 2015, 26; Չոլաքեան, 2021, 365]:

Սակայն շատ շուտով հիշյալ քիչ թե շատ անվտանգ տարածքները ևս հարձակումների թիրախ են դարձել: Արդեն 2014 թ. մարտի 21-ին, երբ Քեսաբը զինյալ հարձակման է ենթարկվել, բնական է, որ հայերը սկսել են հեռանալ նաև երբեմնի հայաշատ այդ վայրից [Kassabtzis in Diaspora…, 2015; First Kessab Refugees…, “Asbarez,” 3.4.2014]:

Քեսաբից շուրջ 670 հայ ընտանիք հեռացել է դեպի հարակից Պասիտ, Լաթաքիա (2.000 հայ) կամ Թարթուս քաղաքներ՝ ապավինելով միջազգային (Կարմիր խաչ և Կարմիր մահիկ) ու տեղական կազմակերպությունների աջակցությանը: Գրեթե ամբողջությամբ հայաթափված տարածքում մնացել են հեռանալու անկարող անձինք, հիմնականում՝ մեծահասակներ, որոնք շարունակել են մնալ իրենց տներում, մյուսները պատսպարվել են եկեղեցու սրահներում կամ դպրոցի դասասենյակներում՝ մատնվելով անորոշության [Armenian Homes…, “Asbarez,” 25.03.2014; Kassabtzis in Diaspora Remember…]: Երեք ամիս անց՝ հունիսի 15-ին Քեսաբն ազատագրվելուց հետո, հայերից շատերն այլևս չեն վերադարձել, այլ մնացել են Լաթաքիայում կամ՝ անցել այլ վայրեր [Համաժողովներ, 2017, 4]: Շատերն ապաստան են գտել նաև Լիբանանում, առավելապես՝ Բեյրութ մայրաքաղաքում և հայկական Այնճար գյուղավանում [Syrian Civil War…; Մկրտչյան, Քեսաբ…]:

***Համայնքային հաստատություններին հասցված վնասները:*** 2017 թ. տվյալներով, Սիրիայում պատերազմը սկսվելուց ի վեր ռմբակոծվել, պայթեցվել, ավերվել, պղծվել են գրեթե բոլոր հայկական եկեղեցիները (շուրջ մեկ տասնյակից ավելի): Հարկ է նշել, որ իսլամիստ ահաբեկիչները հատուկ նպատակադրումով թիրախավորել են հայկական քրիստոնեական հոգևոր հաստատությունները և դրանցից առավել նշանակալիցները պայթեցրել հայ ազգի համար պատմական, ազգային ու կրոնական կարևորություն ունեցող հիշարժան կամ տոնական օրերին (ապրիլի 24, օգոստոս 10, սեպտեմբերի 21 և այլն):

Այդուհանդերձ, Հալեպում, Դեյր-էզ-Զորում, Քեսաբում և այլուր ազգային եկեղեցիների և շինությունների ավերումից հետո իսկ համայնքային կառույցների պատասխանատուների որոշմամբ, այժմ արդեն Դամասկոսում 2015 թ. ապրիլի 26-ին

կատարվել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված հուշակոթողի հիմնարկեքը: Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը մի շարք միջոցառումներով և արարողություններով նշվել է նաև ավերակված Հալեպում [Aleppo Armenians Commemorate…, 2015]: Ի պատասխան, հենց նույն օրը՝ 2015 թ. ապրիլի 26-ին, Հալեպում, ռմբակոծվել է պատմակրոնական արժեք ու նշանակություն ունեցող հնագույն Սբ. Քառասնից մանկանց Մայր եկեղեցին (XV դ.), որը նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Բերիո թեմի Առաջնորդանիստ եկեղեցին էր [Aleppo's Oldest Armenian…, 2015; Գաթրճեան, 2018, 588-590]:

Սիրիայում պատերազմի սկզբից թիրախավորվել են նաև հայկական գերեզմանատները ինչպես Հալեպում, այնպես էլ Դեր-էզ-Զորում, Յակուբիեում [Համաժողովներ…, 2017, 3, 4] և այլուր:

Հակառակ Հալեպի հայկական թաղամասերի (Նոր Գյուղ և այլն) ծանր ռմբակոծումներին ու զոհերին, համայնքային կյանքը Սիրիայում շարունակել է ընթանալ պատերազմական պայմաններում: Այսպես, 2015 թ. հոկտեմբերի տվյալներով Սիրիայում գործել են հայկական 15 դպրոց, նաև՝ որոշ եկեղեցիներ: Տեղերում գործել են սիրիահայերի շտապ օգնության կառույցները, ՀՀ դիվանագիտական մարմինները և հոգևոր կառույցները [«Սուրիահայերը Շուէտի մէջ…», 2015]:

Պատերազմի ընթացքում ռմբակոծվել, ավերվել կամ փակվել են բազմաթիվ հայկական դպրոցներ Սիրիայում, ականապայթյունների զոհ են գնացել տասնյակ աշակերտներ: 2017 թ. տվյալներով վնասվել է Հալեպում գործող 11 վարժարան և դպրոց [«Սուրիահայ գաղութը տոկուն…», 2015; Ապաճեան-ՉիլԱբոշեան և այլք, 2019, 82; Համաժողովներ…, 2017, 2-3]:

***Սիրիահայերի կրած նյութական վնասները:*** Սիրիայի պատերազմը, համայնքայինից բացի, նաև հսկայական նյութական վնաս է հասցրել անհատապես հայ համայնքի ներկայացուցիչներին: Այսպես, տակավին 2014 թ. սեպտեմբերի տվյալներով, ավերվել են 1.700 տուն և ազգային կառույց [The Survival of Syria's Armenian…, 2014]:

Սիրիայում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի հաղորդած տվյալների համաձայն, գրեթե հիմնահատակ ավերվել է Հալեպի հայաբնակ Նոր Գյուղ-Մեյդան թաղամասի բնակֆոնդը՝ շուրջ 1.000 բնակարանով: Վնասվել են «Սիս», «Կիլիկիա», «Օշական», «Արցախ», «Նաիրի» ազգային բնակարանային համալիրները: Թալանվել և ավերվել են քաղաքի, ինչպես նաև Ռամուսե, Շեյխ Նաջջար, Արկուբ շրջանների հայապատկան խանութները, ֆաբրիկաները, գործարանները (շուրջ 1.000 գործատեղի): Թալանվել, ավերվել և զինյալների տիրապետության տակ են անցել հայապատկան գործարանների, պահեստների զգալի մասը Դամասկոսում, տները, խանութները, գործատեղիները Քեսաբում, հրկիզվել են այգիները [«Հալէպի ազատագրումը…», 2016, 2, 4; Գաթրճեան, 2018, 588-590]:

***Հայաստանի կառավարության աջակցությունը Սիրիայից հայրենադարձներին:*** Բազմահազար սիրիահայեր, արտագաղթել ու հանգրվանել են աշխարհի տարբեր երկրներում՝ Լիբանանում, Հորդանանում, Միացյալ Արաբական Էմիրություններում, ԱՄՆ-ում, Կանադայում, Շվեդիայում, Գերմանիայում, Ավստրալիայում և այլուր: Սիրիահայերի զգալի հատվածն ապաստան է գտել նաև Հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Արցախ): Ընդ որում, Հայրենիք ժամանածների թիվը գերազանցել է առանձին վերցրած տարբեր երկրներ մեկնած սիրիահայերի թվին [17.000 սիրիահայեր ապաստան են գտել…]: Ընդհանուր առմամբ, 2018 թ. պաշտոնական տվյալներով, սիրիական պատերազմի արդյունքում Հայաստան է եկել 22.000 սիրիահայ [Human Dimension…; Armenians Embrace Syrians…]:

ՀՀ կառավարությունը, մասնավորապես ՀՀ սփյուռքի նախարարության (2008-2018 թթ.) գործունեության ողջ ընթացքում, ամեն կերպ սատարել է հայրենադարձվել ցանկացողներին, նպաստել Հայրենիքում ներգաղթյալների սոցիալ-տնտեսական և կրթամշակութային համարկմանը (Integration):

Այսպես, ՀՀ կառավարությունը Սիրիայի պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի կենսական նշանակություն ունեցող հարցերը լուծելու նպատակով իրականացրել է մի շարք աջակցության ծրագրեր և միջոցառումներ [Զաքարյան, 2018, 569-570]: Դրանք ներառել են կազմակերպչական ծրագրեր՝ փոփոխություններ իրավական գործառույթներում, փաստաթղթային հարցերի դյուրացում, ժամանակավոր կացարանով և բնակարանային վարձի փոխհատուցման ապահովում, աշխատանքով ապահովում, առողջապահական խնդիրներ, կրթական հիմնախնդիրներ, երիտասարդական ծրագրեր, մշակութային միջոցառումներ [Զաքարյան, 2018, 570-576] և այլն:

ՀՀ սփյուռքի նախարարությունը մշտական կապ է պահպանել Սիրիայում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հայկական համայնքային կառույցների հետ, դյուրացվել է ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացը:

Հայաստանում նորեկներին աջակցելու նպատակով փոփոխություններ են կատարվել ՀՀ մի շարք իրավական ակտերում, ներառյալ ՀՀ կառավարության որոշումներում, տարբեր գերատեսչական ակտերում:

ՀՀ կառավարությունը կազմակերպել է հայրենադարձների տեղավորումը, լուծել նրանց առողջապահական ու կրթական հարցերը՝ փոխհատուցելով դրանց հետ կապված ծախսերը պետության, ինչպես նաև սփյուռքյան ու միջազգային բարեգործական կազմակերպությունների օժանդակությամբ:

ՀՀ սփյուռքի նախարարությունը, գործակցելով տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների հետ, աջակցել է հայրենադարձների աշխատանքով ապահովմանը:

Նրանց համար կազմակերպվել են տարատեսակ դասընթացներ (այդ թվում՝ արևելահայերեն, ռուսերեն) ու վերապատրաստման ծրագրեր, մշակութային միջոցառումներ, երիտասարդական ծրագրեր և այլն:

Հայաստանի հասարակական տարբեր շերտերը, ինչպես նաև անհատները, հնարավորությունների սահմաններում, իրենց անմնացորդ նպաստն են բերել հայրենադարձ սփյուռքահայերին օժանդակելու և Հայրենիքում նրանց ընտելացմանն աջակցելու գործին [Ֆ. 1786, ց. 3, գ. 44, 45; Զաքարյան, 2018, 569-576]:

***Եզրակացություն:*** Ամփոփելով նշենք, որ 2011 թ. մարտից Սիրիայում սկիզբ առած և տակավին մինչև օրս երկրի առանձին վայրերում շարունակվող պատերազմի հետևանքով ամբողջովին կամ մասամբ ավերվել ու հրկիզվել են հայաշատ թաղամասերը, գյուղերն ու քաղաքները, այդ թվում՝ Հալեպը, Դամասկոսը, հայաբնակ Քեսաբը, երկրի ողջ բնակչության հետ բնաջնջման կիզակետում է հայտնվել նաև տեղի հայությունը՝ առանց հարանվանական խտրության:

Պատերազմի պատճառով սկսված արտագաղթի, ինչպես նաև տված զոհերի հետևանքով հայ համայնքը շեշտակի նոսրացել է՝ 80.000 հայից մնացել է շուրջ 10.000-ը [Սիմավորյան, Հովյան, Վերանյան, 2017, 153]: Հետևաբար, Սիրիայի ճգնաժամը նաև հայ համայնքի ճգնաժամն էր:

Այդուհանդերձ, մերձավորարևելյան իրարհաջորդ ճգնաժամային 2000-ական թվականների ողջ ընթացքում հայրենակիցների փրկության համասփյուռքյան հակաճգնաժամային ծրագիր այդպես էլ չի մշակվել համայնքային պատասխանատու կառույցների կողմից:

Փոխարենը, սփյուռքյան որոշ կազմակերպություններ (ՀՅԴ, ՀՕՄ, հայ առաքելական եկեղեցու անթիլյասական թեմ, հայ ավետարանական ու կաթողիկե եկեղեցիներ և այլն) միջազգային համապատասխան կառույցների և տարբեր օտար երկրների (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Շվեդիա և այլն) կառավարությունների գործակցությամբ գաղթականներ ընդունելու մասնաբաժիններ (Quota) են բացել տվել՝ իրականացնելով Մերձավոր Արևելքից հայերի, ինչպես նաև Հայաստան ժամանած հայրենադարձների արտերկիր [Ավագյան, 2022, № 3, 63-80; Ավագյան, 2023, № 3, 61-74] տեղափոխելու իրենց «ավանդական» ծրագիրը[1]:

[1] Անդրադառնալով պատմությանը՝ հարկ է նշել, որ ի հեճուկս ԽՍՀՄ կառավարության կողմից կազմակերպված զանգվածային հայրենադարձության, 1947 թ. ԱՄՆ-ում հիմնվել է Հայրենազուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեն՝ ԱՆՉԱ-ն [American National Committee to Aid Homeless Armenians – ANCHA], որը Երկրորդ աշխարհամարտից հետո իրականացրել է ֆաշիստների կողմից գերի ընկած խորհրդահայ զինվորների, ինչպես նաև տարագիր ավելի քան 4.500 հայերի Արևմտյան Եվրոպայից փոխադրումն ու բնակեցումն ամերիկյան հողում: Իսկ արդեն 1960-70-ական թվ. ԱՆՉԱ-յի գործունեության վերականգնումով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, ինչպես նաև Խորհրդային Հայաստանից 18.500

Արդի աշխարհաքաղաքական մարտահրավերները, որոնք հաջորդաբար ընդգրկում են սփյուռքի տարբեր երկրները, առավել քան առիթ պետք է դառնան համասփյուռքյան առաջնահերթությունների վերաարժևորման, համայնքային կյանքը սփյուռքում բարոյահոգեբանական, գաղափարագործնական առումով արմատապես վերանայելու և վերակազմակերպելու, ապաքաղաքականացնելու և ապակուսակցականացնելու՝ գերնպատակ ունենալով պասիվ *հայապահպանությունից* ու անհեռանկար *համայնքապահպանությունից* անցում կատարելու գործնական *հողապահպանություն*՝ [Ավագյան, 2015, 333-354] «Դեպի Երկի՛ր» կազմակերպված *հայրենադարձության* և *հայրենաշինության*:

## Գրականության ցանկ

Hayastani azgayin arkhiv (HAA), F. 1786, ts'. 3, g. 44, 45: **(in Armenian)**

**Apachean-Ch'ilAboshean L., Azarikean-Pamak'szean S., Ch'ilAboshean-Poghikean M., Hallachean S.-** Apachean-Ch'ilAboshean L., Azarikean-Pamak'szean S., Ch'ilAboshean-Poghikean M., Hallachean S., Verakangnumi ashkhatank'neru hamaynapatker, «Gandzasar. Bats'arrik», Halep, 2019, ej 82. **(in Armenian)**

**Avagyan K'.-** Avagyan K'., Siriahayeri artagaght'y Kanada (2013-2016 t't'.), «Lraber hasarakakan gitut'yunneri», Yerevan, 2022, № 3, ej 63-80. **(in Armenian)**

**Avagyan K'.-** Avagyan K'., Siriayi hayeri teghasharzhy arterkir (Libanan, T'urk'ia, Hordanan, AMN, Shvedia, Avstralia) (2012-2018 t't'.), «Lraber hasarakakan gitut'yunneri», Yerevan, 2023, № 3 (669), ej 61-74: **(in Armenian)**

**Avagyan K'.-** Avagyan K'., Hayapahpanut'yun, t'e? hoghapahpanut'yun. Serndap'vokhut'yan gortsynt'ats'y sp'yurrk'um azgayin petakanut'yan arrajnahert'ut'yunneri hamatek'stum, «Hayastan. TS'eghaspanut'yunits' veratsnund. 1915-2015», Yerevan, 2015, ej 333-354: **(in Armenian)**

**Gat'rchean A.-** Gat'rchean A, Halepahayut'ean krats vnasnery (Aknark), «Surioy hayery. Gitazhoghovi niwt'er (24-27 Mayis, 2015)», khmb., Andranik Tagesean, Peyrut', Haigazian University Press, 2018, ej 587-592: **(in Armenian)**

**Zak'aryan F.-** Zak'aryan F, Siriayi hay hamaynk'i het taruogh ashkhatank'nery (2008-2015), «Surioy hayery. Gitazhoghovi niwt'er (24-27 Mayis, 2015)», khmb., Andranik Tagesean, Peyrut', Haigazian University Press, 2018, ej 569-570: **(in Armenian)**

«Halepi azatagrumy zineal grohayinneren mets khandavarrut'iwn u hogekan andorrut'iwn steghtsets' bolorin mej», «Azdak»-in k'yse Zarmik Poghikean, harts'azruyts'y, N. B.-i, 2016, 16 Dektember, <http://www.arfd.am/syriahay/?p=4922>: **(in Armenian)**

Hamazhoghovner. Hayastan-Sp'yurrk' 6-rd hamazhoghov, Siriayi Arabakan Hanrapetut'yunum HH despan Arshak P'voladyani zekuyts'y, «Siriahay hamaynk'i vichaky (2011-2017 t't'.)», 2017, 18-20 septemberi, <http://www.mindiaspora.am/am/HS_6_hamajoxov>: **(in Armenian)**

---

հայերի տեղափոխել են ԱՄՆ և այլ երկրներ՝ սկիզբ դնելով Խորհրդային Հայաստանից արտագաղթին: Այն առավել թափ է ստացել 1975 թ. Հելսինկյան եզրափակիչ ակտով՝ «Ընտանիքների վերամիավորման» դրույթից ելնելով:

**Mkrtch'yan Gayane-** Mkrtch'yan Gayane, K'esab. yntanik'nery veradarrnum yen, ch'nayats apagayi anoroshut'yany, 2014, 17 hunisi, <https://www.armenianow.com>: **(in Armenian)**

**Ch'volak'ean Yakob-** Ch'volak'ean Yakob, Suriahay gaghut'y paterazmen arraj, Karapetyan Rruben, Siriahayery Hayastanum. Integrman ughinery, «Hayastani yev sp'yurrk'i et'nosots'iolagiakan usumnasirut'yunner», № 9, Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2015, ej 26. **(in Armenian)**

**Ch'volak'ean Yakob-** Ch'volak'ean Yakob, Suriahay dprots'i patmut'iwn, h. A, Yerevan, HAI hrat., 2021, ej 365. **(in Armenian)**

**Simavoryan Aristakes, Hovyan Vahram, Veranyan Karen-** Simavoryan Aristakes, Hovyan Vahram, Veranyan Karen, Israyeli, Irani, T'urk'iayi, Adrbejani k'aghak'akanut'yuny sp'yurrk'i nkatmamb, Yerevan, «Noravank'» GKH, 2017, ej 153: **(in Armenian)**

«Suriahay gaghut'y tokun yev zorawor armatneru vray himnuats u kazmuats gaghut' e», ky yaytne Surioy H.Y.D. Kedronakan Komitei andam Nerses Sargisean, 2015, 2 Dektember, <http://hairenikweekly.com/2015/12/02/24700>: **(in Armenian)**

«Suriahayery Shueti mej krts'an yekeghets'i unenal». Hranoysh Yakobean, 2015, 30 Hoktember, <http://www.ragmamoul.net/news/news-from-armenia/սուրիահայերը-շուէտի-մէջ-կրցան-եկեղե/>: **(in Armenian)**

17.000 siriahayer apastan yen gtel Hayastanum. inch'pe?s ognel nrants' (harts'azruyts'), 2016, marti 26, <http://armedia.am>: **(in Armenian)**

Aleppo Armenians Commemorate Genocide Centennial. 2015, April 28, <http://asbarez.com/134553/aleppo-armenians-commemorate-genocide-centennial/>.

Aleppo's Oldest Armenian Church Bombed. 2015, April 29, <http://www.agos.com.tr/en/article/11427/aleppos-oldest-armenian-church-bombed>.

Armenian Homes in Kessab Looted, Occupied. "Asbarez," 2014, March 25.

Armenians Embrace Syrians Fleeing War – and Their Food. 2019, November 28, <https://www.curiositymag.com>.

First Kessab Refugees Arrive in Armenia. "Asbarez," 2014, April 3.

Human Dimension Implementation Meeting. Working Session 12. Rights of Migrants. Delivered by Davit Knyazyan, Head of the OSCE and Conventional Arms Control Division, Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia. 2018, September 28, p. 1, <https://www.osce.org>.

Kassabtzis in Diaspora Remember Their Quaint Town in Syria. Majority of Inhabitants Who Are of Armenian Ethnicity Recall Town Being Plundered. 2015, March 21, <http://gulfnews.com>.

The Survival of Syria's Armenian Community. "Asbarez," 24.09.2014.

Syrian Civil War Comes to Armenian Community. 2014, April 3, <http://www.santafenewmexican.com>.

Two Third of Armenian Population Left Syria. 2015, May 21, <http://www.panorama.am>.